

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
N 120/10

Քաղ. Երևան

31 մայիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) հետեյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ.Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. մայիսի 31-ի նիստում (արձանագրություն N80/11) քննարկեց 2010թ. մայիսի 13-ի «Auto Eorope» LLC-ի ընկերության ներկայացուցիչ Է. Նահապետյանի «AUTOEUROPA» (հայտի համար՝ IR 962190) ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման համար հիմք են հանդիսացել «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի «զ» ենթակետը եւ «Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման» կարգի 15.6 ենթակետը, ինչպես նաև 94-րդ կետը, որի համաձայն նշանը չի կարող գրանցվել 39-րդ դասի նույն եւ նույնատիպ ծառայությունների համար այլ անձի անունով ավելի վաղ առաջնությամբ գրանցված ֆիրմային անվանման «ԱՎՏՈԵՎՐՈ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ (282.110.03966, Նժդեհի 17, ք. Երևան) առկայության պատճառով, քանի որ հայտարկվող նշանը շփոթության աստիճան նման է հակադրվող ֆիրմային անվանմանը, որը զբաղվում է նույն եւ նույնատիպ ծառայությամբ եւ սպառողին կարող է շփոթության մեջ գցել:

Բողոքարկողը նշում է, որ հիմք ընդունելով ավելի վաղ առաջնությամբ «ԱՎՏՈԵՎՐՈ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (պետական ռեգիստրի գրանցման համար՝ 282.110.03966) ֆիրմային անվանման գրանցումը, կրկնական փորձաքննության 26.02.2010թ. որոշմամբ

մերժվել է «Auto Eorope» LLC-ի ընկերության «AUTOEUROPA» (հայտի համար՝ IR 962190) ապրանքային նշանի միջազգային գրանցումը ՀՀ տարածքում:

Բողոքարկողը նշում է, որ մերժված նշանի և հակադրված ֆիրմային անվանման սեփականատերերը ծավալում են իրենց գործունեությունը և մատուցում են ծառայություններ բոլորովին տարբեր ոլորտներում: «Auto Eorope» LLC-ի ընկերությունը «AUTOEUROPA» ապրանքային նշանի ներքո առաջարկում է հիմնականում գործակալությունների միջոցով ճանապարհորդությունների կազմակերպման գործընթացի հետ կապված ծառայություններ, այն է տեղերի ամրագրում և տոմսերի նախօրոք պատվիրում, ավտոմեքենաների վարձույթ: Մինչդեռ, «ԱՎՏՈՆԵՎՐՈ ՊՐՈԻՒՊ» ՍՊԸ ընկերության գործունեությունը ներառում է ավտոմեքենաների, դրանց մասերի ու կցամասերի վաճառք, առևտուր, այն է կենցաղային իրերի, շինանյութերի, ջեռուցման սարքերի, երկաթեղենի առևտուր, չվացուցակին չենթարկվող ցամաքային ուղևորատար այլ տրանսպորտ, ավտոճանապարհային տրանսպորտով փոխադրում: Բողոքարկողը նշում է նաև այն փաստը, որ IR N 962190 միջազգային գրանցմամբ մերժված ապրանքային նշանով առաջարկվող ծառայությունները կապված են հիմնականում հեռավոր ճանապարհորդությունների կազմակերպման հետ: Պնդում է, որ երկու ընկերությունների կողմից առաջարկվող ծառայությունների սպառման ոլորտները միանգամայն տարբեր են, ուստի և շփոթելը սպառողի կողմից բացառվում է, և իրավունքների խախտման հարց չի կարող առաջանալ:

Բողոքում նշված է, որ ապրանքային նշանը ֆիրմային անվանման հետ չշփոթելու պայմանն այն է, որ «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն, «Ապրանքային և սպասարկման նշանները այն նշաններն են, որոնցով որևէ անձի ապրանքները և ծառայությունները, համապատասխանաբար տարբերվում են այլ անձանց նույնատիպ ապրանքներից և ծառայություններից»: Այսինքն, ապրանքային կամ սպասարկման նշանը կոչված է զետեղվելու ապրանքի կամ ծառայության մատուցման վայրի վրա, դրանով իսկ ճանաչելի ու տարբերակելի դարձնելով ապրանքը կամ ծառայությունը սպառողի կողմից: Իսկ այս դեպքում «AUTOEUROPA» ապրանքային նշանը հանդիսանում է հայտատու ընկերության անվանումը և խորհրդանշում է տվյալ ընկերությանը: Այսինքն, նշանի

շնորհիվ ճանաչվում և տարբերակվում է թ՛ե մատուցվող ծառայությունը, թ՛ե ընկերությունը:

Բողոքարկողը նշում է այն կարևոր հանգամանքը, որ «Auto Eorope» LLC-ի ընկերության մեկ այլ «AUTOEUROPE» IR N 963369 միջազգային գրանցումն արդեն պահպանություն է ստացել ՀՀ տարածքում եւ խնդրում է վերանայել կրկնական փորձաքննության որոշումը՝ պահպանություն ընձեռելով «AUTOEUROPA» IR N 962190 միջազգային գրանցմանը Հայաստանի Հանրապետության տարածքում:

Կոլեգիայի քննարկման արդյունքների ներկայացման ժամանակ նշվեց, որ փորձաքննության բաժինը հաշվի է առել գրանցված «ԱՎՏՈՆԵՎՐՈՆ-ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության ֆիրմային անվանումը, փորձաքննության արդյունքում մերժել է «Auto Eorope» LLC-ի ընկերության «AUTOEUROPA» IR N 962190 միջազգային ապրանքային նշանի գրանցումը:

Մերժման հիմք է հանդիսացել ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը եւ «Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման» կարգի 15.6 ենթակետը, ինչպես նաեւ 94-րդ կետը, որի համաձայն նշանը չի կարող գրանցվել այլ անձի անունով ավելի վաղ առաջնությամբ «ԱՎՏՈՆԵՎՐՈՆ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ ֆիրմային անվանման առկայություն պատճառով: Կոլեգիան գտնում է, որ վերոհիշյալ ապրանքային նշանը եւ ֆիրմային անվանումը սպառողին շփոթության մեջ չեն գցի, եւ հաշվի առնելով այն փաստը, որ փորձաքննության ժամանակ, բաժինը ի հայտ բերելով «ԱՎՏՈՆԵՎՐՈՆ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ ֆիրմային անվանման առկայությունը, իրավական պահպանություն է տվել ՀՀ տարածքում «Auto Eorope» LLC ընկերության մեկ այլ «AUTOEUROPE» IR N 963369 միջազգային ապրանքային նշանին, ապա այդ դեպքում կարելի է գրանցել նաեւ «AUTOEUROPA» (IR N 962190) հայտարկված ապրանքային նշանը:

Ընդհանուր քննարկման արդյունքում բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Auto Eorope» LLC-ի ընկերության «AUTOEUROPA» IR N 962190 միջազգային ապրանքային նշանը եւ «ԱՎՏՈՆԵՎՐՈՆ-ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը կարող են համագոյատեւել:

Հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության

բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի»
68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Auto Eorope» LLC-ի» ընկերության բողոքը ամբողջությամբ եւ գրանցել «AUTOEUROPA» (IR N 962190) հայտարկված ապրանքային նշանը՝ չեղյալ ճանաչելելով 26.02.2010թ. կրկնական փորձաքննության որոշումը:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա.Ազիզյան